



ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՕԹՆԵԱԿ

Մարտիկեան Թանգարանի բացումին առթիւ եւ Երուսաղէմի Քաղաքապետարանի հովանաւորութեամբ կազմակերպուեցաւ Հայ Արուեստի եօթնեակ մը: Թանգարանի բացման օրը, գիշերուան ժամը 8-10, Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուեցաւ Հայկական Ծովօրի երեկոյթ մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին բաղաբիս հայկական բոլոր կազմակերպութիւնները — Հ. Մ. Ը. Մ., Հ. Ե. Մ., Հ. Օ. Մ., Ե. Հ. Բ. Մ. եւ Հայ կաթողիկէ Աբաքս — արտասանութիւններով, մեներգներով, խմբերգներով եւ հայկական պարերով որոնք, հակառակ փչող ցուրտ քամիին, ընդարձակ բակը զրեթէ ծայրէ ի ծայր լեցուցած հայ եւ հրաւիրեալ օտարազգի բազմութեան որոտընդոստ ծափերուն արժանացան: Ներկայ էր նաեւ Ամին. Ս. Պատրիարք Հայրը, Միաբանութեան անդամներուն հետ միասին: Երեկոյթին առնչուած Տիար Վարդան Տէր Վարդանեան: Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Տիար Յակոբ Տէմիրճեան:

Շարաթ, 21 Ապրիլի գիշերուան ժամը 8ին, Պատրիարքարանի դահլիճին մէջ, ճաշկերոյթ տրուեցաւ ի պատիւ Մարտիկեան եւ Մոմճեան ամուսնորուն: Ներկայ էին հայկական Միութիւններու վարչութիւններն ու օտար ականաւոր անձնաւորութիւններ:

Հայ Արուեստի փառատօներ փակուեցաւ Ս. Զատիկի տօնին օրը, Կիրակի, 22 Ապրիլի երեկոյեան. բաղաբիս արեւմտեան բաժնին Թ. Վլայի կոչում թաղամասին մէջ գտնուող Երուսաղէմի Թատրոնին ընդարձակ եւ շրջի սրահին մէջ կազմակերպուած Հայ Երաժշտութեան Համերգով: Ներկայ էր բովանդակ Միաբանութիւնը, Ամին. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Ամերիկահայ պատուական հիւրերը, գաղութիս երեւելի դէմքերը եւ ստուարաթիւ օտարներ:

Դորձադրուեցաւ երկու ժամեր տեւող ճօխ յայտագիր մը, ըստ հետեւեալին. —

Ս. Աթոռոյս երկսեռ երգչախումբը, Դպրապետ Տիար Սահակ Գալայճեանի ղեկավարութեամբ, Տէրունակուն Աղօթքի երգեցողութեամբ, բացումը կատարեց երեկոյթին: Ապա Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան մեներգեց Աբամ Միրանգուլեանի «Հայրենի Լեռներ»ը, որմէ ետք երգչախումբը երգեց Վարդան Սարգսեանէ դաշնաւորուած եւ Տիրամօր ծօնուած «Զանգուաղի Լուսոյ Մայր»՝ Ս. Մենդեան մեղեդին: Տիկին Յասմիկ Գահուէճեան իր աղու ծայնով մեներգեց Արտէն Մէջինեանէ եղանակաւորուած «Որոնում եմ» երգը, որուն յաջորդեց Համբարձում Պէրպէրեանէ դաշնաւորուած Վահան Թէքէեանի «Կ'անծրեւէ Տղաս»ը, զոր իր հեշտալուր ծայնովը մեներգեց Հոգ. Տ. Մանուէլ Աբեղայ երկաթեան: Յետոյ նորէն բեմ բարձրացաւ երգչախումբը, երգելու համար Կոմիտասի դաշնաւորած «Քրիստոս Պատարագեալ»ը: Յովհաննէս Պետրոսեանէ երգուած Ալեքսան

Հէքիմանի դաշնաւորած «Բարի Արագի» ծանօթ եւ սիրուած երգէն ետք, անմահն Կոմիտասէ եղանակաւորուած եւ երգչախումբի կողմէ երգուած «Գովես երուսաղէմ զՏէր»-ը փակեց առաջին մասը հանդիսութեան:

Հանդիսականներ առիթը ունեցան նաեւ վայելելու ունկնդրութիւնը Ամերիկահայ երաժիշտ Ալան Յովհաննէսի եւ Արամ Խաչատուրեանի երաժշտական կտորներու:

Կարճ դադարէ մը ետք սկսաւ երկրորդ մասը հանդէսին, որը իր կարգին ունէր զոյգ ստորաբաժանումներ: Առաջին մասը կը բաղկանար 6 հայկական պարերէ: Նախ կատարուեցան 3 պարեր՝ Հայ Երիտասարդաց Միութեան երկսեռ պարախումբի կողմէ, «Գիւղական», «Կովկասեան» եւ «Լազ» պարեր, որոնցմէ ետք, մանչերու կողմէ միայն, կատարուեցաւ Հայկական Պար: Աղջիկներու կողմէ կատարուած Հարսանեկան Պարին յաջորդող եւ երկսեռ պարախումբին կողմէ կատարուած «Հօյ Նազան» ժողովրդական պարը փակեց պարաշարը: Ապա բեմ հրաւիրուեցաւ Rubin Academy of Musicի երգչախումբը, որ շնորհալիօրէն կատարեց «Երեսն էրերունի» եւ «Հինկալլա» հայ ժողովրդական խմբերգները: Երեկոյթը փակուեցաւ զոյգ երգչախումբերուն կողմէ կատարուած «Տէր, Կեցո» մաղթերգով՝ որ գագաթնակէտին հասցուց ներկաներուն խանդավառութիւնը:

Կանխապէս առնուած ժամադրութեան համաձայն, յաջորդ օրը, կէսօրին, Ամենապատիւ Ս. Պատրիարքը, Գերշ. Սրբազաններ եւ Հոգշ. Հայրեր, քաղաքիս երեսելի ազգայիններէն խումբի մը հետ գացին Իսրայէլի Նախագահ Ն. Բարձրութիւն Իցհար Նալօնի ապարանքը, ուր Ն. Բարձրութեան ներկայացուցին Ս. Աթոռոյս յարգամեծար հիւրն ու քարեկամը:

Գեղեցիկ խօսքով մը հանդէս եկաւ Թանգարանիս Բարերար Տիար Եղուարդ Մարտիկեան, որ յայտնեց նաեւ իր ուրախութիւնը եւ շնորհակալութիւնը ի տես հայ համայնքին վայելած սիրոյն եւ բարեացակամ վերարբմունքին պետական իշխանութեան կողմէ: Վսեմաշուք Նախագահը պատասխանեց գնահատանքի բարձր արտայայտութիւններով հայ համայնքին եւ հայ ժողովուրդին նկատմամբ:

* * *

Հայ Արուստի Եօթնակի հանդիսութիւններու կազմակերպութեան եւ իրականացման համար յատուկ Յանձնախումբ մը կազմուած էր գաղութիս ակումբներու վարչականներէն: Ատենապետն էր Տիար Նուպար Արսէնեան, Ատենադպիր՝ Տիար Կարօ Հէքիման եւ Դանձապահ՝ Տիկին Վարդուհի Օհաննէսեան: Ժրաջան եւ անխոնջ աշխատանքով, պատուարժան Յանձնախումբը սկսաւ իր գործունէութիւնը յատուկ պատուիրակութեամբ մը եւ ծաղկեփունջերով բարի գալուստի երթալով օդակայան, Տէր եւ Տիկին Մարտիկեաններու եւ անոնց ընկերացող խումբին ժամանման առթիւ:

Նոյն Յանձնախումբի աշխատանքին արդիւնքը եղաւ յաջող երեկոյթը Վանքի մեծ բակին մէջ:

